Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ

31 դեկտեմբերի 2023թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)	7
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	10
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)	11
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Grant Thornton

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

«ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են տալիս են Ընկերության՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանքներ

Ընկերության 2022 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններն աուդիտի են ենթարկվել մեկ այլ աուդիտորի կողմից, որի 2023թ. հունիսի 12-ի եզրակացությամբ այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ արտահայտվել է չձևափոխված կարծիք:

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 28-ում, հաշվետու տարվա ընթացքում Ընկերությունը վերանայել է 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները: Մենք աուդիտի ենք ենթարկել նաև այդ վերաներկայացումները:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու

նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Էրիկ Կասիլյան
Լիազորագրի պատասխանատու

26 սեպտեմբերի 2024թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներ-կայացված)	2022թ. հունվարի 1-ի դրությամբ (վերաներ-կայացված)
Ակտիվներ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	4	2,467,977	2,888,699	2,355,940
Ոչ նյութական ակտիվներ		621	726	1,104
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	5	1,253,697	836,114	229,751
Հետաձգված հարկային ակտիվներ	6	79,905	4,331	-
Ներդրումներ ասոցիացված կազմակերպությունում		-	-	1,111
Ոչ ընթացիկ ակտիվների համար տրված կանխավճարներ		-	93,249	8,988
		3,802,200	3,823,119	2,596,894
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ	7	4,632,444	2,858,388	938,620
Պայմանագրային ակտիվներ	8	35,609	406,820	479,782
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9	2,514,453	919,702	251,258
Տրված փոխառություններ		-	-	150
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	10	2,133,202	1,517,225	342,922
		9,315,708	5,702,135	2,012,732
Ընդամենը ակտիվներ		13,117,908	9,525,254	4,609,626

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներ-կայացված)	2022թ. հունվարի 1-ի դրությամբ (վերաներ-կայացված)
Սեփական կապիտալ և պարտավորություններ				
Կապիտալ և պահուստներ	11			
Կանոնադրական կապիտալ		540,000	136,060	136,060
Էմիսիոն եկամուտ		253,400	253,400	253,400
Պահուստային կապիտալ		19,000	19,000	19,000
Կուտակված շահույթ		514,314	1,863,012	2,210,379
		1,326,714	2,271,472	2,618,839
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Ակտիվներին վերաբերող շնորհներ		101,574	47,284	-
Հետաձգված հարկային պարտավորություններ	6	-	-	33,906
Վարձակալության գծով պարտավորություն	12	637,399	427,251	174,418
		738,973	474,535	208,324
Ընթացիկ պարտավորություններ				
Պայմանագրային պարտավորություններ	8	5,252,927	3,074,764	562,442
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	15	2,142,317	2,670,026	630,257
Ստացված փոխառություններ կապակցված կողմերից	13	1,765,927	34,520	7,555
Բանկային վարկեր	14	1,056,300	840,955	545,000
Վերադարձի իրավունքով ֆակտորինգի գծով պարտավորություն	9	362,314	-	-
Վարձակալության գծով պարտավորության ընթացիկ մաս	12	239,380	150,355	37,209
Ընթացիկ հարկային պարտավորություն		233,056	8,627	-
		11,052,221	6,779,247	1,782,463
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		13,117,908	9,525,254	4,609,626

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2024թ. սեպտեմբերի 26-ին:

Աշոտ Վարդանյան
Տնօրեն

Արսեն Սոհոյանյան
«ԷՅԷՍ Աուդիտ» ՓԲԸ ներկայացուցիչ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 50-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերանայված)
Հասույթ	16	13,331,309	4,405,842
Վաճառքի ինքնարժեք	17	(11,238,984)	(3,929,837)
Համախառն շահույթ		2,092,325	476,005
Այլ եկամուտ		47,386	29,756
Իրացման ծախսեր		(19,640)	(36,047)
Վարչական ծախսեր	18	(385,368)	(256,876)
Ակնկալվող պարտքային կորստի գծով ծախս	9	(98,662)	(54,503)
Ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով ծախսեր		-	(55,494)
Այլ ծախսեր	19	(719,264)	(234,959)
Գործառնական գործունեությունից շահույթ/ (վնաս)		916,777	(132,118)
Ֆինանսական եկամուտ/(ծախսեր), զուտ		(78,089)	50,781
Ոչ գործառնական օգուտ/(վնաս), զուտ		18,443	10,635
Շահույթ/ (վնաս) մինչև հարկերը		857,131	(70,702)
Շահութահարկի գծով (ծախս)/ փոխհատուցում	20	(164,929)	23,335
Տարվա շահույթ/ (վնաս)		692,202	(47,367)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		692,202	(47,367)

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 50-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Պահուստային կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2022թ. հունվարի 1-ի դրությամբ (նախքան վերաներկայացումը)	136,060	253,400	19,000	2,319,831	2,728,291
Վերաներկայացում	-	-	-	(109,452)	(109,452)
2022թ. հունվարի 1-ի դրությամբ (վերաներկայացումից հետո)	136,060	253,400	19,000	2,210,379	2,618,839
Տարվա վնաս	-	-	-	(47,367)	(47,367)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	(47,367)	(47,367)
Շահաբաժինների վճարում	-	-	-	(300,000)	(300,000)
Գործարքներ սեփականատերերի հետ	-	-	-	(300,000)	(300,000)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	136,060	253,400	19,000	1,863,012	2,271,472
Տարվա շահույթ	-	-	-	692,202	692,202
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	692,202	692,202
Կանոնադրական կապիտալի թողարկում	403,940	-	-	-	403,940
Շահաբաժինների վճարում	-	-	-	(2,040,900)	(2,040,900)
Գործարքներ սեփականատերերի հետ	403,940	-	-	(2,040,900)	(1,636,960)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	540,000	253,400	19,000	514,314	1,326,714

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 50-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներ-կայացված)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրացումից մուտքեր	14,287,172	6,064,319
Մուտքեր գործառնական այլ գործունեությունից	11,528	17,804
Վճարումներ մատակարարներին	(11,806,332)	(6,089,121)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(2,239,003)	(879,296)
Վճարումներ պետական բյուջե	(1,551,482)	(382,145)
Ստացված կանխավճարներ պայմանագրային ակտիվների գծով	2,178,162	2,516,071
Այլ գործառնական վճարումներ	(31,597)	(26,792)
Շահութահարկի գծով վճարումներ	(16,074)	(7,477)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ, զուտ	832,374	1,213,363
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(157,633)	(251,444)
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքից մուտքեր	10,523	1,000
Ֆինանսական վարձակալության գծով վճարումներ	(216,291)	(64,160)
Ստացված տոկոսներ	113,423	50,781
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(249,978)	(262,823)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2023թ. դեկտեմբեր ի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներ-կայացված)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված վարկերից և փոխառություններից մուտքեր	7,346,927	3,388,115
Ստացված վարկերի և փոխառությունների մարումներ	(5,372,725)	(3,092,545)
Բաժնետիրական կապիտալի թողարկումից մուտքեր	403,940	-
Վճարված շահաբաժիններ	(2,223,855)	-
Վճարված տոկոսներ	(120,938)	(70,166)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	33,349	225,404
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ	615,745	1,175,944
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	232	(1,641)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	1,517,225	342,922
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	2,133,202	1,517,225

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 50-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«ՀԱԷԿ-ի Շինարարություն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է 1999թ.-ին:

Ընկերությունը պետական գրանցում է ստացել Հայաստանի Հանրապետության պետական ռեգիստրում՝ 1999թ. նոյեմբերի 25-ին, Հայաստանի Հանրապետության Վկայականի գրանցման թիվն է՝ 83.120.00856, ՀՎՀՀ՝ 04412536:

Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝

- էներգետիկական կառույցների շինարարություն,
- արտաքին ինժեներական ցանցերի և սարքավորումների իրականացման աշխատանքներ,
- շենքերի և շինությունների կասկադի կառուցում,
- մետաղյա կոնստրուկցիաների արտադրություն,
- ցեմենտ-բետոնյա, գիպսե իրերի արտադրություն,
- գյուղատնտեսական գործունեություն:

Ընկերությունն իր գործունեության որոշ տեսակները ՀՀ օրենսդրության համաձայն ենթակա են լիցենզավորման: Ընկերության գործող լիցենզիաները տրամադրվել են քաղաքաշինության նախարարության կողմից 23.10.2007թ. և 23 06.2011թ.-ին՝ անժամկետ և ներառում են.

- Լիցենզիա N 11282-01՝ Շինարարության իրականացում՝ բնակելի, հասարակական և արտադրական ոլորտի:
- Լիցենզիա N 11282-02՝ Շինս ըարության իրականացում՝ տրանսպորտային ոլորտի;
- Լիցենզիա N 11282-03՝ Շինարարության իրականացում՝ հիդրոտեխնիկական ոլորտի;
- Լիցենզիա N 11282-04՝ Շինարարության իրականացում՝ էներգետիկ ոլորտի:

Ընկերության բաժնետերերն են Աշոտ Վարդանյանը և Հրաչիկ Վարդանյանը 80.01% և 19.99% բաժնեմասնակցությամբ համապատասխանաբար:

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2023թ. կազմել է 354 մարդ (2022թ.՝ 258 մարդ):

Ընկերությունն ունի ներդրումներ Ինտերինժստրոյ Հոլդինգ ՓԲԸ-ում և Գլոբալ Քոնսթրաքշն Քոմփանի ՓԲԸ-ում: Հաշվի առնելով, որ Ինտերինժստրոյ Հոլդինգ ՓԲԸ-ն լուծարվել է, իսկ Գլոբալ Քոնսթրաքշն Քոմփանի ՓԲԸ գործունեությունը ժամանակավորապես դադարեցված է, այս ընկերություններում ունեցած սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումներն արժեզրկվել են:

Ընկերության գործունեության հասցեն է՝ ք. Երևան, Շարուրի փող. 36/2:

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում էլ ավելի է սրվել Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյունքում: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, և թե երկարաժամկետ առումներով:
2023թ. Հայաստանի Հանրապետությունում քաղաքական իրավիճակը շարունակում է մնալ համեմատաբար անկայուն, 44-օրյա Արցախյան պատերազմի հետևանքները դեռևս էական ազդեցություն են ունենում երկրի ընդհանուր տնտեսության վրա: 2023թ. սեպտեմբերին տեղի ունեցավ շուրջ 120,000 Արցախաբնակ հայերի բռնի տեղահանումը դեպի Հայաստան, որը լրացուցիչ տնտեսական և քաղաքական ցնցումների առիթ հանդիսացավ: Քաղաքական անկայուն իրավիճակի, միջազգային ճանապարհների պարբերաբար փակման, հրադադարի ռեժիմի կարճաժամկետ խախտումների հետևանքով, դժվար է հստակ կանխատեսել նշված պայմանների տնտեսական ազդեցությունը Ընկերության գործունեության վրա:

2022թ. փետրվարի 24-ին Ուկրաինայում բռնկված հակամարտությունն արագությամբ շարունակում է ծավալվել՝ զգալի ազդեցություն թողնելով աշխարհի վրա: ԱՄՆ-ն և եվրոպական երկրները շարունակաբար կոշտ պատժամիջոցներ են կիրառում Ռուսաստանի Դաշնության դեմ: Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի Հանրապետության էական առևտրատնտեսական գործընկերն է, ուստի սույն ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ կիրառվող պատժամիջոցները, ինչպես նաև դրանց ընդարձակումը կարող են լուրջ ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկաների և ամբողջ տնտեսության վրա: Համաշխարհային մակարդակով ավելի խոր պատժամիջոցներ կիրառելը կարող է հանգեցնել բարձր գնաճի, ֆինանսական շուկաների աճի տեմպի նվազման և որոշակի խաթարման:

Ուկրաինայում բռնկված հակամարտությունը պատճառ դարձավ, որ հազարավոր ռուսներ և ուկրաինացիներ տեղափոխվեն Հայաստանի Հանրապետություն: Սա վերաբերում է ոչ միայն անհատներին, այլ նաև ձեռնարկություններին, որոնք հիմնադրվել և իրենց գործունեությունը ծավալել են այդ երկրներում: Դա հանգեցրեց հայկական շուկա արտարժույթի ներհոսքի ավելացմանը, ինչի հետևանքով հայկական դրամը զգալի արժևորվեց ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ: Մյուս կողմից, ՀՀ կենտրոնական բանկը ոչ մի միջոց չձեռնարկեց, որպեսզի թուլացնի հայկական ազգային արժույթի դիրքերը:
Ղեկավարությունը չի ակնկալում, որ ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ հայկական դրամի հետագա արժևորում կլինի: Այնուամենայնիվ, Ուկրաինայում շարունակվող հակամարտությունը կարող է հանգեցնել Հայաստան դեռևս ավելի մեծ արտարժույթի ներհոսքի, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական կայունության վրա:

Հաշվի առնելով Ընկերության գործունեության ոլորտը, այդ ոլորտուն դրական դինամիկայի շարունակականությունը և կշիռը Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ի մեջ, ինչպես նաև գործող պայմանագրերը, Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ իր ընթացիկ իրացվելիության վիճակը բավարար է կայուն գործունեության համար: Ընկերությունը պարբերաբար վերանայում է իր իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ:

Չնայած ղեկավարության ջանքերին, ապագա տնտեսական և քաղաքական անորոշությունները դեռևս կարող են մարտահրավերներ ստեղծել Ընկերության գործունեության համար, և Ընկերության փաստացի ֆինանսական արդյունքներն առաջիկա ժամանակաշրջաններում կարող են տարբերվել ղեկավարության ներկա սպասումներից: Ուստի, տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Ընկերության գործունեության վրա:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 21-ում:

Չնայած ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության կողմից ներկա ցուցանիշների վերաբերյալ տեղեկացված լինելու վրա, այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին: Հետևաբար, կատարված ենթադրությունները և դատողությունները համապատասխանաբար կճշգրտվեն այն տարում, որում պայմանները կփոխվեն:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2022թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2022թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2022թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը
ՖՀՄՍ 3	*Հղումներ հայեցակարգային հիմունքներին (ՀՀՄՍ 3 փոփոխություններ)*
ՀՀՄՍ 16	*Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը (ՀՀՄՍ 16 փոփոխություններ)*
ՀՀՄՍ 37	*Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսումներ (ՀՀՄՍ 37 փոփոխություններ)*
ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16	*2018-20201թ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ (ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16 փոփոխություններ)*

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը	Տվյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառելի
ՖՀՄՍ 17	*Փոփոխություններ Ապահովագրական պայմանագրերում ՖՀՄՍ 17, ներառյալ ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարաձգումը (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 12	*Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 1	*Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 8	*Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՍ 8 փոփոխություն)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 1	*Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՍ 1 և Գործնական կիրառություն 2)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 1	*Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 16	*Վարձակալության պարտավորություն Վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքի ժամանակ (ՖՀՄՍ 16 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 1	*Ոչ-ընթացիկ պարտավորություններ պայմանագրերի հետ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*

2.6 Կլիմային առնչվող հարցեր

Կլիմայի փոփոխություններով պայմանավորված ռիսկերը կարող են անբարենպաստ ազդեցություն թողնել Ընկերության բիզնես գործունեության վրա: Կլիմայական ռիսկերը բաժանված են անցումային (օրինակ՝ կանոնադրական փոփոխություններ և հեղինակային ռիսկեր) և ֆիզիկական ռիսկերի (նույնիսկ եթե ֆիզիկական վնասի ռիսկը ցածր է ընկերության գործունեության և աշխարհագրական դիրքից ելնելով): Ներկայումս Ընկերությունը կիրառում է նոր տեխնոլոգիական լուծումներ՝ նվազեցնելու օգտագործվող էներգիայի մակարդակը, մասնավորապես առանձնակի կարևորության SS ենթակառուցվածքի համար առավելագույն հնարավոր պաշտպանությունը ապահովելու ոլորտում (արդյունավետ գոլորշիացմամբ հովացման լուծումների կիրառմամբ):

ֆինանսական հաշվետվությունների վրա կլիմայի փոփոխությունների երկարաժամկետ հետևանքները դժվար է կանխատեսել: Կազմակերպություններից պահանջվում է իրականացնել էական դատողություններ և գնահատումներ: Ընկերության կողմից կատարված դատողությունների մասով առկա է անորոշություն՝ կապված օրենսդրական փոփոխությունների հետ (օրինակ՝ կառավարությունների կողմից ընդունված

բնապահպանական հարկերը), Ընկերության կողմից ստանձնած բնապահպանական նոր պարտավորությունները՝ ածխածնի կրճատում, նոր տեխնոլոգիաների զարգացում, հեռահաղորդակցության սարքավորումների արտադրության համար օգտագործվող բնական ռեսուրսների սպառում և այլն:

Ներկայումս Հայաստանում չկան գործող օրենսդրական պահանջներ կլիմայի հետ կապված հարցերի համար, և, որպես այդպիսին, այս ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում այդ հարցերի հնարավոր ապագա ազդեցությունը Ընկերության գործունեության վրա:

2.7 Ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

Ընկերությունը կիրառում է հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները և իրականացնում է նախորդ տարիների սխալների ուղղումը հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո թողարկման համար հայտարարված ֆինանսական հաշվետվությունների առաջին փաթեթում՝ վերահաշվարկելով ներկայացված նախորդող ժամանակաշրջանների համեմատելի այն գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ եթե սխալը տեղի է ունեցել նախքան ամենավաղ ներկայացված ժամանակաշրջանը, այդ դեպքում՝ վերահաշվարկելով ներկայացված ամենավաղ նախորդող ժամանակաշրջանի համար ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները: Ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ նախորդ տարիների համադրելի տեղեկատվությունը, ներկայացված են այնպես, կարծես ուղղումը կատարվել է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում առաջացել է դրա կատարման անհրաժեշտությունը: Հետևաբար, յուրաքանչյուր ներկայացված ժամանակաշրջանին վերաբերող ուղղման գումարը վերագրվում է այդ տարվա ֆինանսական տեղեկատվությանը:

3 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 404.79 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 447.90 ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 393.57 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 420.06 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում

Ասոցիացված կազմակերպություններում ներդրումները չափվում են բաժնեմասնակցության մեթոդով:

Ասոցիացված կազմակերպություններում ներդրումների հաշվեկշռային արժեքը աճեցվում կամ նվազեցվում է ասոցիացված կազմակերպության և համատեղ ձեռնարկի շահույթում կամ վնասում և այլ համապարփակ արդյունքում Ընկերության շահաբաժինը ճանաչելու

համար՝ անհրաժեշտության դեպքում ճշգրտելով գումարները, որպեսզի ապահովվի Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխանությունը:

Խմբի և իր ասոցիացված կազմակերպությունների միջև գործարքների արդյունքում առաջացած չվաստակած օգուտները և չկրած վնասը բացառվում են Ընկերության՝ այդ կազմակերպություններում բաժնեմասնակցության չափով: Երբ ակտիվի չկրած վնասը բացառվում է, հիմքում ընկած ակտիվը նաև ենթարկվում է արժեզրկվածության գծով ստուգման :

3.3 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության: Վարձակալական գույք հանդիսացող սարքավորումները նույնպես ընդգրկվում են հիմնական միջոցներում, եթե դրանք ստացվել են ֆինանսական վարձակալությամբ: Նման ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում (որը որոշվում է՝ համեմատելով սեփական համանման ակտիվների հետ) կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	-	20-50 տարի
Փոխանցող հարմարանքներ, մեքենա, սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ	-	5-20 տարի
Արտադրատնտեսական գույք	-	1-8 տարի
Այլ	-	5 տարի:

Քանի որ հողի համար հնարավոր չէ որոշել վերջավոր օգտակար ծառայության ժամկետ, համապատասխան հաշվեկշռային արժեքը չի ամորտիզացվում:

3.4 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.5 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Ընկերությունը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվները վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների արժեքը ներառում է վարձակալության գծով ճանաչված պարտավորությունների գումարը, կատարված սկզբնական ուղղակի ծախսումները և վարձակալության գծով վճարումները, որոնք կատարվել են մեկնարկի ամսաթվի դրությամբ կամ դրանից առաջ՝ հանած վարձակալության վճարները: Եթե Ընկերությունը համոզված չէ, վարձակալված ակտիվի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու հարցում, ապա օգտագործման իրավունքի ձևով ճանաչված ակտիվները ամորտիզացվում են գծային մեթոդով՝ դրանց գնահատված օգտակար ծառայության և վարձակալության ժամկետից ավելի կարճ ժամանակահատվածում: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ենթակա են արժեզրկման:

Վարձակալության գծով պարտավորություն

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Ընկերությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Վարձակալության գծով վարձավճարները ներառում են հաստատուն վճարումներ՝ հանած վարձակալության ստացվելիք վճարները, վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո: Վարձակալության գծով վարձավճարները ներառում են նաև գնման օպցիոնի իրագործման գինը, եթե Ընկերությունը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, ինչպես նաև վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքները, եթե ընկերությունը խելամտորեն համոզված չէ, որ վաղաժամ չի դադարեցնի վարձակալությունը:

Վարձակալության գծով փոփոխուն վճարումները, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից, ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ տեղի է ունենում վճարման պատճառ հանդիսացող իրադարձությունը կամ պայմանը:

Մեկնարկի ամսաթվին Ընկերությունը չափում է վարձակալության գծով պարտավորությունն այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել:

Վարձակալության գծով վարձավճարների ներկա արժեքը հաշվարկելիս Ընկերությունը օգտագործում է փոխառության տոկոսադրույքը վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, եթե վարձակալության մեջ նշված տոկոսադրույքը հեշտությամբ որոշել հնարավոր չէ: Մեկնարկի ամսաթվից հետո վարձակալության գծով պարտավորությունը կնվազեցվի վարձակալության գծով վճարումների չափով և կմեծացվի օգտագործման իրավունքի ձևով ակտիվների չափով: Ի լրումն, վարձակալության գծով պարտավորությունների հաշվեկշռային արժեքը վերաչափվում է՝ արտացոլելու վարձակալության ժամկետի փոփոխություն, բովանդակության փոփոխություն, հաստատուն վճարումների կամ հիմքում ընկած ակտիվի ձեռքբերման գծով գնահատման փոփոխություն:

3.6 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.7 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Ընկերության՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը արտացոլված է այլ ծախսերում: Ընկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 22-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,

ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը, ինչպես նաև ցուցակված պարտատոմսերը:

Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են «հավաքագրման համար պահվող» կամ «հավաքագրման և վաճառքի համար պահվող» բիզնես մոդելներից տարբեր մոդելի շրջանակներում, դասակարգվում են որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով: հետագայում, անկախ բիզնես մոդելից, բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց պայմանագրային դրամական հոսքերը չեն հանդիսանում միայն մայր գումարի և հաշվարկված տոկոսի մարում, հաշվառվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները դասակարգվում են այս կատեգորիայում, բացառությամբ հեջավորման գործիքների, որոնց համար գործում են հեջավորման հաշվառմանը ներկայացվող պահանջները:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: Այս մոդելը փոխարինում է ՀՀՄՍ 39-ում կիրառվող «կրած վնասների մոդելին»: Նոր պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված վարկերը և այլ փոխառային տիպի այլ ֆինանսական

ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում, առևտրային դեբիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն և վարկային պարտավորությունները և որոշ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը (թողարկողի համար), որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթում կամ վնասում:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Ընկերության՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Ընկերությունը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն խեղաթյուրվել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն խեղաթյուրվել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

«12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են առաջին դասի ակտիվների համար, մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր և պայմանագրային ակտիվներ

Ընկերությունը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և պայմանագրային ակտիվները օգտվելով պարզեցված մոտեցումից և կորուստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Ընկերությունն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից

Ընկերությունը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից: ՖՀՄՍ 9-ի՝ արժեզրկմանը ներկայացվող պահանջների կիրառման մանրամասն վերլուծությունն արտացոլված է ծանոթագրություն 23-ում:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Ընկերության ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 22-ում:

Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և անվանական արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է սեփականատերերից: Այս դեպքում իրական և անվանական արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.8 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Բաժնետիրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքը:

Էմիսիոն եկամուտը ներառում է բաժնետոմսերի թողարկումից ստացված ցանկացած հավելավճար: Գործարքի գծով ցանկացած ծախսում, որը կապված է բաժնեմասերի թողարկման հետ, նվազեցվում է էմիսիոն եկամուտից, շահութահարկի գծով եկամուտը հանելուց հետո:

Կուտակված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.9 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի գնահատման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

3.10 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան

հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

3.11 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

1. աշխատավարձերը և պարգևավճարները,
2. վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցում են ծառայություններ, Ընկերությունն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

1. որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Ընկերությունը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,
2. որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Ընկերությունն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.12 Հասույթ

Հասույթը ձևավորվում է հիմնականում շինարարական և կառուցապատման աշխատանքների գծով ծառայությունների մատուցումից, ոչ մետաղական հանքաարդյունաբերության հանածո հանդիսացող շինանյութերի և բետոնի իրացումից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Ընկերությունն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1. Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
2. Բացահայտել կատարման պարտականությունները
3. Որոշել գործարքի գինը
4. Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
5. Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Ընկերությունը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես Պայմանագրային պարտավորություններ (տե՛ս ծանոթագրություն 8): Նման ձևով, եթե Ընկերությունը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Ընկերությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

Հասույթը ճանաչվում է դուրսգրման մեթոդով՝ հիմնված ապրանքների կամ ծառայությունների արժեքի ուղղակի չափման վրա, պայմանագրով նախատեսված մնացած ապրանքների կամ ծառայությունների փոխանցման ամսաթվի դրությամբ: Ընտրված դուրսգրման մեթոդը լիովին արտացոլում է Ընկերության կատարողականը կատարման պարտականությունների ամբողջական բավարարման ուղղությամբ: Դուրսգրման մեթոդը կարող է ներառել մինչ օրս արված կատարողականը, սահմանված հիմնաքարային ամսաթվերը կամ կատարողականի վրա ծախսված ժամանակը:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ

	Հող, շենքեր և շինություններ	Փոխանցող հարմարանքներ, մեքենա-սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ	Արտադրա-տնտեսական գույք, այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ (վերաներկայացված)	1,087,246	2,820,243	619,884	4,527,373
Ավելացում	-	88,619	803,989	892,608
Օտարում	-	(9,336)	(120,348)	(129,684)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	1,087,246	2,899,526	1,303,525	5,290,297
Ներքին տեղաշարժ	-	(336)	336	-
Ավելացում	41	113,765	800,561	914,367
Օտարում	-	(57,390)	(192,053)	(249,443)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,087,287	2,955,565	1,912,369	5,955,221
Կուտակված մաշվածություն				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	201,120	1,720,798	249,516	2,171,434
Տարվա հաշվարկ	30,936	150,536	59,642	241,114
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(7,740)	(3,210)	(10,950)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	232,056	1,863,594	305,948	2,401,598
Տարվա հաշվարկ	45,256	743,582	379,504	1,168,342
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(48,100)	(34,596)	(82,696)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	277,312	2,559,076	650,856	3,487,244
Հաշվեկշռային արժեք				
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	855,190	1,035,932	997,577	2,888,699
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	809,975	396,489	1,261,513	2,467,977

Հիմնական միջոցներ դասում 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ զրո հաշվեկշռային արժեքով հաշվառվում են 1,851,830 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ին՝ 159,500 հազար դրամ) սկզբնական արժեքով հիմնական միջոցներ:

Բանկային վարկերը և փոխառություններն ապահովելու նպատակով Ընկերությունը 2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրավադրել է 2,344,059 հազար հաշվեկշռային արժեք ունեցող հիմնական միջոցներ:

Մաշվածության գծով ծախսը բաշխվել է հետևյալ կերպ՝

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Վաճառքի ինքնարժեք	1,006,536	206,366
Վարչական ծախսեր	96,760	24,384
Այլ ծախսեր (պահպանման ծախսեր)	16,089	2,521
Կապիտալացում անավարտ արտադրանքի արժեքին	48,957	7,843
	1,168,342	241,114

5 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Հազար դրամ	2023թ.	2022թ. (վերաներ-կայացված)
Մնացորդը տարվա սկզբում	836,113	229,751
Վարձակալության պայմանագրի փոփոխություն	581,048	654,124
Մաշվածության հաշվարկ	(163,464)	(47,761)
Մնացորդը տարվա վերջում	1,253,697	836,114

6 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2023թ.	2022թ. (վերաներ-կայացված)
Տարեսկզբի մնացորդ	(4,331)	33,906
Շահույթում կամ վնասում ճանաչված փոխհատուցում (տե՛ս ծանոթագրություն 20)	(75,574)	(38,237)
Տարեվերջի մնացորդ	(79,905)	(4,331)

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2023թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2023թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Տրված փոխառություններ	9,989	-	9,989
Պաշարներ	51,343	(30,818)	20,525
Օգտագործման իրավունքով ակտիվներ	850	(850)	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	29,100	43,216	72,316
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	(58,475)	70,462	11,987
	32,807	82,010	114,817
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Հիմնական միջոցներ	28,209	(7,446)	20,763
Օգտագործման իրավունքով ակտիվներ	-	9,171	9,171
Վարձակալության գծով պարտավորություններ	267	4,711	4,978
	28,476	6,436	34,912
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	4,331	75,574	79,905

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2022թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2022թ. (վերաներ-կայացված)
Հետաձգված հարկային ակտիվներ			
Տրված փոխառություններ	-	9,989	9,989
Պաշարներ	75,068	(23,725)	51,343
Օգտագործման իրավունքով ակտիվներ	-	850	850
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	20,872	8,228	29,100
	95,940	(4,658)	91,282
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Հիմնական միջոցներ	29,370	(1,161)	28,209
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	100,476	(42,001)	58,475
Վարձակալության գծով պարտավորություններ	-	267	267
	129,846	(42,895)	86,951
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	(33,906)	38,237	4,331

7 Պաշարներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հումք և նյութեր	664,056	804,076
Անավարտ արտադրանք	3,692,834	1,944,285
Պատրաստի արտադրանք	275,554	110,027
	4,632,444	2,858,388

Անավարտ արտադրանքի մնացորդում ներառված է Երևան, Դավթաշեն 10-րդ փողոց, 15/5 հողամաս հասցեում գտնվող «Բրիջվյու» բնակելի համալիրի կառուցման համար կատարված ծախսումները, այդ թվում 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ համալիրում բնակարանների առքուվաճառքի իրավունքի վաճառքի մասով 2,658,529 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 880,051 հազար դրամ) և վաճառքի համար մատչելի պատրաստի մասի արժեքը: Համալիրի կառուցումը սկսվել է 2021թ.-ին և ղեկավարությունն ակնկալում է համալիրը շահագործման հանձնել 2025թ.-ի հունիս ամսին:

Տարվա ընթացքում ծախս ճանաչված պաշարների գումարը կազմում է 9,270,276 հազար դրամ (2022թ.՝ 4,720,097 հազար դրամ): Պաշարները գրավադրված չեն:

8 Պայմանագրային ակտիվներ և պարտավորություններ

Պայմանագրային ակտիվներն իրենցից ներկայացնում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կառուցման պայմանագրերի գծով ճանաչված հասույթը այն փոխհատուցելի ծախսերի գծով, որոնք փաստացի կատարվել են, բայց դեռ չեն ընդունվել հաշվետու ամսաթվի դրությամբ: Այս ակտիվները կճանաչվեն են որպես առևտրային դեբիտորական պարտքեր և կհաշվեփակվեն այդ ակտիվների ձեռքբերման նպատակով հաճախորդներից ստացված կանխավճարի հետ, երբ կառուցման ընթացքում գտնվող նախագծերի ավարտական ակտերը հաստատվեն և Ընկերությունը հաճախորդների հետ կատարի պայմանագրային պարտավորությունների ընդունում-հանձնում: Մնացորդից 35,608 հազար դրամ ընդունվել է 2024թ.-ի առաջին եռամսյակում:

2021թ.-ից մինչ օրս «Բրիջվյու» բնակելի համալիրի վաճառքի ուղղակի և հիփոթեքային վաճառքներից հաճախորդներից ստացել է 5,252,927 հազար դրամ կանխավճար, որը ճանաչվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ որպես պայմանագրային պարտավորություն: Սույն բնակելի համալիրի մասով, համաձայն գործող օրենսդրական կարգավորումների և արդեն իսկ կնքված պայմանագրային դրույթների, Ընկերությունը բավարարում է կատարման պարտականությունը ավարտական ակտի կնքման պահին:

9 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներ-կայացված)
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	2,272,986	689,705
Պարտքային կորուստների համար պահուստ	(180,621)	(81,959)
Այլ դեբիտորական պարտքեր	7,411	6,051
	2,099,776	613,797
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Տրված կանխավճարներ	414,636	180,373
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	41	125,532
	414,677	305,905
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	2,514,453	919,702

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Ապրանքների վաճառքից և ծառայությունների մատուցումից առաջացած առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է 62 օր (2022թ. 63 օր): Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

Տրված կանխավճարներ հոդվածում ներառված է 36,000 հազար դրամ, որն Ընկերությունը փոխանցել է Իսակով Ինժեներինգ ՓԲԸ-ին որպես կանոնադրական կապիտալում ներդրման համար գումար, որը 2024թ. ապրիլին, ստանալով պետական գրանցում, վերադասակարգվել է ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում հոդվածին:

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին վերականգնելի են:

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերությունը ԱԿԲԱ Բանկ ԲԲԸ-ի հետ կնքել է վերադարձի իրավունքով ֆակտորինգային պայմանագիր, որի շրջանակներում տրամադրվել է 1,160 հազար դրամ կանխիկ դրամական միջոց և հաշվեգրվել է 24,917 հազար դրամ տոկոսային ծախս, որի վճարման պարտավորությունը լրացուցիչ համաձայնագրով դրված է Ընկերության առևտրային գործընկերոջ վրա, որից ստացման ենթական դրամական միջոցների պահանջի իրավունքն Ընկերությունը զիջել է ԱԿԲԱ Բանկ ԲԲԸ-ին: Այս գործարքների գծով պարտավորության մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է ընդամենը 362,314 հազար դրամ, որից 360,000 հազար դրամը մայր գումարի գծով մնացորդն է, իսկ 2,314 հազար դրամը՝ հաշվեգրված տոկոսագումարի գծով մնացորդը:

Ընկերության՝ համեմատական ժամանակաշրջանի բոլոր առևտրային և այլ դեբիտորական պարտքերը վերանայվել են արժեզրկման հայտանիշների առկայության ստուգման համար: Ընկերությունը բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում»: Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը խմբավորվել են՝ ելնելով պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներից և ժամկետանց օրերից:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի համար կորուստի գծով պահուստի մնացորդը համադրվում է տարեսկզբի մնացորդի հետ հետևյալ կերպ.

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Կորուստների գծով պահուստը տարեսկզբի մնացորդ	81,959	27,456
Տարվա ընթացքում պահուստի ճանաչում	98,662	54,503
Կորուստների գծով պահուստը տարեվերջի մնացորդ	180,621	81,959

Տե՛ս ծանոթագրություն 23 (ա)՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

10 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մնացորդներ դրամակղում	-	404
Բանկային հաշիվներ, ներառյալ՝		
Դրամ	2,097,495	1,508,217
ԱՄՆ դոլար	35,707	8,604
	2,133,202	1,517,225
Որից՝ Սահմանափակված մնացորդներ	2,064,543	1,482,261
Օգտագործման համար մատչելի մնացորդներ	68,659	34,964
	2,133,202	1,517,225

Ընկերության բանկային հաշիվները պահվում են Հայաստանի հեղինակավոր բանկերում, ուստի դրամական միջոցների պարտքային կորստի ազդեցությունը Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա գնահատվում է ոչ էական:

Սահմանափակված դրամական միջոցները վերաբերում են Ընկերության կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի առքուվաճառքի, գրավի, հիփոթեքի և դրամական միջոցների գրավի խառը պայմանագրերին, որոնցով բանկի կողմից վճարված գումարները սահմանափակվում են մինչև Ընկերության կողմից ավարտական ակտի ստորագրման պահը: Այդ ընթացքում դրական մնացորդների վրա բանկը հաշվեգրում և վճարում է տոկոսագումարներ, որոնց նկատմամբ որևէ սահմանափակում չկա:

11 Կապիտալ և պահուստներ

11.1 Կանոնադրական կապիտալ

Բաժնեմասերի քանակը, եթե այլ բան նշված չէ	Սովորական բաժնեմասեր 2023թ.	Սովորական բաժնեմասեր 2022թ.
Հայտարարված բաժնեմասեր		
Սովորական բաժնեմասերի քանակը, յուրաքանչյուրը՝ 10,000 դրամ	70,000	30,000
Թողարկված և տարվա ընթացքում ամբողջովին վճարված	40,940	-
Սովորական բաժնեմասերի քանակը, յուրաքանչյուրը՝ 10,000 դրամ	54,000	13,060

Ընկերությունն ունի սովորական բաժնեմասերի մեկ դաս, որը հաստատուն եկամտի նկատմամբ իրավունք չունի:

11.2 Շահաբաժիններ

2023թ.-ին Ընկերությունը հայտարարել է 2,040,900 հազար դրամ շահաբաժին (2022թ.-ին՝ 300,000 հազար դրամ), որը մարվել է, այնուհետև բաժնետերերն այդ գումարով անտոկոս փոխառության տեսքով ֆինանսավորել են Ընկերության գործունեությունը (տե՛ս ծանոթ. 13):

12 Ֆինանսական և գործառնական վարձակալություններ

Ընկերության վարձակալության գծով պարտավորությունների հաշվեկշռային արժեքները և տարվա ընթացքում տեղաշարժերը ներկայացված են ստորև.

Հազար դրամ	2023թ.	2022թ. (վերանայված)
Մնացորդը տարվա սկզբում	577,606	171,180
Պայմանագրի փոփոխություն	606,246	654,124
Վարձակալության գծով վճարումներ	(364,978)	(205,562)
Ֆինանսական ծախսի հաշվեգրում	108,826	31,385
Արտարժույթի փոխարժեքային տարբերության ազդեցություն	3,370	(26,237)
Սուբսիդավորվող մասի վերադասակարգում ակտիվներին վերաբերող շնորհներին	(54,291)	(47,284)
Մնացորդը տարվա վերջում	876,779	577,606

Սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ վարձակալության գծով պարտավորության նկատմամբ կիրառվող փոխառության միջին տոկոսադրույքը կազմում է 12%:

Վարձակալության գծով պարտավորությունները ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընթացիկ	239,380	150,355
Ոչ ընթացիկ	637,399	427,251
	876,779	577,606

Ընկերությունը 2018թ.-ից կնքել է արտադրական սարքավորումների ֆինանսական վարձակալության պայմանագրեր ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ ՓԲԸ ընկերության հետ՝ ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ ԱՄՆ դոլարով: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի 15 համանման գործող պայմանագիր, որոնց մարման միջին մնացորդային ժամկետը հաշվետու ամսաթվի դրությամբ 4 տարի է: Այս պայմանագրերից թվով 9-ը ունեն ՀՀ կառավարության կողմից սուբսիդավորվող տոկոսագումարներ, որոնց գծով մնացորդների ներկա արժեքների հանրագումարը ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ ճանաչվել է որպես ակտիվներին վերաբերող շնորհներ: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն:

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն ունի սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործվել միայն Ընկերության կողմից, քանի դեռ առկա չէ ակտիվը երրորդ կողմին տրամադրելու պայմանագրային իրավունք: Վարձակալությունը ենթակա չէ չեղարկման, կամ հնարավոր է դադարեցնել միայն նախատեսված չափով վճարում կատարելու դեպքում: Որոշ վարձակալություններ պարունակում են հիմքում ընկած ակտիվն անմիջապես վարձակալության ժամկետի ավարտին ձեռք բերելու կամ վարձակալության ժամկետը երկարացնելու հնարավորություն:

Վարձակալության գծով վճարներ, որոնք չեն ճանաչվում որպես պարտավորություն

Ընկերությունը կարճաժամկետ վարձակալությունների (12 ամիս կամ ավելի պակաս ակնկալվող ժամկետով) և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար որոշել է չճանաչել վարձակալության գծով պարտավորություն: Նման վարձակալությունների համար կատարված վճարները ծախսագրվում են գծային հիմունքով: Ի լրումն, չի թույլատրվում որպես վարձակալության գծով պարտավորություն ճանաչել որոշակի փոփոխուն վճարներ, դրանք ծախսագրվում են կատարման պահին:

13 Ստացված փոխառություններ կապակցված կողմերից

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունն ունի անտոկոս ստացված փոխառություններ իր երկու բաժնետերերից: Ընկերությունն անտոկոս փոխառությունների տրամադրման և ստացման բազմաթիվ գործարքներ է կատարել Ընկերության նկատմամբ վերահսկողություն ունեցող անձանց հետ: Գործարքների հիմնական նպատակը հիմնադիրների կողմից դրամական միջոցների հոսքերի և մնացորդների արդյունավետ կառավարումն է: Շատ դեպքերում՝ ելնելով ընթացիկ իրավիճակի անհրաժեշտությունից, այս փոխառությունների տրամադրման խստացման և մարման ժամկետներն ու գումարներն էականորեն տարբերվում են պայմանագրերով սկզբնապես նախատեսված գումարներից և ժամկետներից:

Փաստացիորեն Ընկերությունը չի վերահսկում փոխառությունների տրամադրման ավելացման, և մարման ժամկետներն ու գումարները, և հաշվետու ամսաթվին հաջորդող տասներկու ամիսների ընթացքում հնարավոր է կատարի փոխառությունների չպլանավորված մարումներ՝ ելնելով գործառնական անհրաժեշտություններից: Ուստի անտոկոս փոխառությունների գծով հնարավոր չէ կատարել սպասվող դրամական հոսքերի արժանահավատ կանխատեսում, սակայն ղեկավարության գնահատմամբ այս գումարներն ամբողջությամբ ընթացիկ են և դրանց իրական արժեքը հավասար է դրանց հաշվեկշռային արժեքին, քանի որ զեղչման ազդեցությունն էական չէ:

14 Բանկային վարկեր

	Ընթացիկ			
Հազար դրամ	Տոկոսադրույք	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Տոկոսադրույք	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկային գիծ ՀՀ դրամով				
Առևտրային բանկ 1	12.5%	782,000	11%	680,000
Առևտրային բանկ 2	13%	274,300	13%	160,955
		1,056,300		840,955

Վարկերն ապահովված են Ընկերության հիմնական միջոցներով և կապակցված կողմերի գույքով ու երաշխավորություններով (տե՛ս ծանոթագրություն 4):

Ընթացիկ վարկերի իրական արժեքը հավասար է դրանց հաշվեկշռային արժեքին, քանի որ զեղչման ազդեցությունն էական չէ:

Տե՛ս ծանոթագրություն 23՝ վարկերի արժույթների բացահայտման համար:

Ընկերության տոկոսային և արտարժութային ռիսկերի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 23-ում:

15 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերանայված)
Առևտրային կրեդիտորական պարտքեր	716,864	385,688
Հաճախորդներից կանխավճարներ	744,619	1,696,474
Հատուցումներ աշխատակիցներին	200,731	84,661
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	247,224	95,712
Չօգտագործված արձակուրդային օրերի գծով պահուստ	202,853	82,967
Պարտավորություններին մասնակիցներին	-	300,000
Այլ	30,026	24,524
	2,142,317	2,670,026

Ապրանքների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների մարման միջին տևողությունը կազմում է 23 օր (2022թ.՝ 36 օր): Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման

քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

Ընկերության արտարժութային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 23-ում:

16 Հասույթ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատանքների կատարումից	13,180,692	4,156,167
Արտադրանքի վաճառքից և ծառայությունների մատուցումից	150,617	249,675
	13,331,309	4,405,842

2023թ. հասույթը ներառում է 3,279,878 հազար դրամ (2022թ.՝ 1,952,689 հազար դրամ), որն ընդգրկված է տարեսկզբի դրությամբ առկա պայմանագրային պարտավորությունների մնացորդում, 200,000 հազար դրամ (2022թ.՝ 219,300 հազար դրամ), որը ձևավորվել է նախկին ժամանակաշրջաններում բավարարված կամ մասամբ բավարարված կատարման պարտականություններից՝ պայմանագրերի փոփոխությունով պայմանավորված:

Ընկերության հասույթն ըստ ճանաչման ժամկետայնության ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ժամանակի մեջ ինչ որ պահին փոխանցվող ապրանքներ	13,295,700	3,999,022
Ժամանակի ընթացքում փոխանցվող աշխատանքներ	35,609	406,820
	13,331,309	4,405,842

17 Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատանքների ինքնարժեք	11,140,314	3,789,737
Արտադրանքի և ծառայությունների ինքնարժեք	98,670	140,100
	11,238,984	3,929,837

18 Վարչական ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հատուցումներ աշխատակիցներին	188,697	130,553
Հիմնական միջոցների մաշվածության, նորոգման և սպասարկման գծով ծախսեր	105,995	52,350
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	20,407	13,031
Գրասենյակային և հեռահաղորդակցության գծով ծախսեր	11,868	11,755
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	12,060	10,700
Բանկային և ապահովագրության գծով ծախսեր	23,712	22,927
Այլ	22,629	15,560
	385,368	256,876

19 Այլ ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վարձակալված ակտիվների մաշվածության գծով ծախսեր	27,330	2,035
Պաշարների փչացումից կորուստներ	12,330	6,727
Արտարժույթի փոխարկման ծախսեր	8,827	15,581
Պահպանման ծախսեր	669,167	197,548
Տույժեր և տուգանքներ	691	12,457
Այլ	919	611
	719,264	234,959

20 Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	240,503	14,902
Հետաձգված հարկ (տե՛ս ծանոթագրություն 6)	(75,574)	(38,237)
	164,929	(23,335)

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	857,131		(70,702)	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2022թ.՝ 18%)	154,284	18.0	(12,726)	18.0
(Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ	10,645	1.2	(10,609)	15.0
Շահութահարկի գծով ծախս	164,929	19.2	(23,335)	33.0

21 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

21.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

Հիմնական միջոցների վրա կապիտալացվող ծախսումներ

Ընկերությունը հիմնական միջոցների ձեռքբերման, կառուցման և բարելավման հետ կապված որոշակի ծախսեր կապիտալիզացնում է՝ համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ «Հիմնական միջոցներ»: Այս կապիտալացված ծախսերը ներառում են ուղղակի ծախսերը և, անհրաժեշտության դեպքում, անուղղակի ծախսերի բաշխումը: Ղեկավարությունը կիրառում է էական դատողություն որոշելու համար, թե որ ծախսերն են համապատասխանում կապիտալացման Ընկերության համար ընդունելի չափանիշներին:

Պաշարներ

Ղեկավարությունը գնահատում է պաշարների զուտ իրացման արժեքը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ հասանելի ամենավստահելի ապացույցները: Այս պաշարների ապագա իրացման վրա կարող են ազդեցություն ունենալ ապագա տեխնոլոգիաները կամ շուկայով առաջնորդվող այլ փոփոխությունները:

Շինարարական պայմանագրերից հասույթ

Շինարարական պայմանագրերից հասույթի ճանաչված գումարները և համապատասխան դեբիտորական պարտքերն արտացոլում են յուրաքանչյուր պայմանագրի, արդյունքի և կատարման աստիճանի վերաբերյալ ղեկավարության հնարավորինս լավագույն գնահատականը: Առավել բարդ պայմանագրերի մասով՝ հատկապես ավարտմանը հասցնելու հետ կապված ծախսերի և պայմանագրի շահութաբերության որոշման մասով առկա է գնահատման էական անորոշություն (տե՛ս ծանոթագրություն 3.12):

21.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված կարևոր դատողություններ

Ստորև ներկայացված են ղեկավարության՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված դատողությունները, որոնք ամենաէական ազդեցությունն ունեն ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ծառայությունների և շինարարական պայմանագրերից հասույթի ճանաչումը

Քանի որ որոշ շինարարական պայմանագրերից հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում, հաշվետու ժամանակաշրջանում ճանաչված հասույթի գումարը կախված է նրանից, թե ինչքանով է բավարարված կատարման պարտականությունը: Համանման եղանակով, անավարտ շինարարական պայմանագրերից հասույթի ճանաչումը նույնպես պահանջում է էական դատողություն՝ 3.12 ծանոթագրությունում նկարագրված մեթոդները կիրառելիս պայմանագրային ակտիվի մեծությունը որոշելու համար:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը

Այն չափը, որով կարող է ճանաչվել հետաձգված հարկային ակտիվ, կախված է այն հավանականության գնահատումից, թե արդյո՞ք ապագայում հասանելի կլինի եկամուտ, որի դիմաց կիրացվեն նվազեցման ենթակա ժամանակավոր տարբերությունները և նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասը: Ի լրումն, անհրաժեշտ է էական դատողություն հարկային միջավայրում իրավական և տնտեսական սահմանափակումների և անորոշությունների գնահատման ժամանակ:

22 Ֆինանսական գործիքներ

22.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3-ում:

22.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	2,099,776	613,797
Սահմանափակված դրամական միջոցներ բանկերում	2,064,543	1,482,261
Դրամական միջոցներ	68,659	34,964
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	4,232,978	2,131,022

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	2,822,227	875,475
Վարձակալության գծով պարտավորության	876,779	577,606
Վերադարձի իրավունքով Ֆակտորինգի գծով պարտավորություն	362,314	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	917,595	770,349
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	4,978,915	2,223,430

23 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ընկերությունը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, տոկոսադրույքային ռիսկի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժութային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Ընկերության գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Ընկերության՝ արտերկրյա ձեռքբերումներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով: Բացի այդ Ընկերությունն ունի ԱՄՆ դոլարով և եվրոյով վարկեր, որն օգտագործվել է ընթացիկ գործունեությունը ֆինանսավորելու համար:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

Հոդված

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի
Ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ	35,707	-	-
	35,707	-	-
Ֆինանսական պարտավորություններ			
Վարձակալության գծով պարտավորություն	259,233	-	8,667
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	-	55,452	-
	259,233	55,452	8,667
Զուտ արդյունք	(223,526)	(55,452)	(8,667)

Հոդված

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ
Ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ	8,604	-	-
	8,604	-	-
Ֆինանսական պարտավորություններ			
Վարձակալության գծով պարտավորություն	138,101	-	-
	138,101	-	-
Զուտ արդյունք	(129,497)	-	-

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% (2022թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2022թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2022թ.՝ 10%):

Դրամի արժեզրկումը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 10%-ով (2022թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2023թ.	2022թ.	2023թ.	2022թ.
Շահույթ կամ վնաս	22,353	12,950	(5,545)	-
	22,353	12,950	(5,545)	-

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Ընկերության՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

Բնակարանների ոչ հիփոթեքային վաճառքի պայմանագրերը ինդեքսավորվում են, ընդ որում, հիմնականում փոխարժեքի գերազանցման մասով, ինչը էապես հավասարակշռում է վարկերի և այլ պարտավորությունների գծով արժութային ռիսկերը:

Տոկոսադրույքային ռիսկ

Ընկերությունը ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկի, քանի որ ունի հաստատուն տոկոսադրույքներով փոխառու միջոցներ: Ընկերությունն այս ռիսկը կառավարում է՝ ապահովելով համապատասխան չափի հաստատուն տոկոսադրույքով փոխառու միջոցներ: Ստորև ներկայացված զգայունության վերլուծությունն իրականացվել է տոկոսադրույքի 3% փոփոխության համար: 3%-ը ղեկավարության կողմից գնահատված տոկոսադրույքի հավանական փոփոխությունն է:

Եթե տոկոսադրույքը լիներ 3% բարձր/ցածր, իսկ մյուս փոփոխականները մնային հաստատուն, ապա Ընկերության 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթը կնվազեր/կաճեր 2,343 հազար դրամով (2022թ.՝ կաճեր/ կնվազեր 1,523 հազար դրամով):

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Ընկերության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Ընկերության պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների և ավանդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է ավանդները տարբեր բանկերում պահելու միջոցով և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Ընկերությունը շարունակաբար հսկում է հաճախորդների պարտքի հատկանիշները՝ ելնելով պարտքի վարկանիշային քարտից: Եթե հնարավոր է, օգտագործվում են նաև հաճախորդների վերաբերյալ արտաքին վարկանիշներ և/կամ հաշվետվություններ: Ընկերության քաղաքականությունն է համագործակցել միայն վճարունակ գործընկերների հետ: Պարտքերի ժամկետները տատանվում են 30-ից 90 օրերի միջև: Ընթացիկ պարտքային ռիսկը կառավարվում է պարբերական ժամկետային վերլուծություններ կատարելու միջոցով՝ համատեղելով յուրաքանչյուր հաճախորդի համար կրեդիտորական պարտքի սահմանաչափի որոշմամբ:

Առևտրային դեբիտորական պարտքեր

Ընկերությունը բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ:

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ: Դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից:

Ակնկալվող կորուստների դրույքաչափերը հաշվարկվել են՝ հիմնվելով 2023թ. դեկտեմբերի 31-ին և 2023թ. հունվարի 1-ին համապատասխանաբար նախորդող 36 ամսվա ընթացքում վաճառքի դիմաց ստացված վճարումների պատկերի վրա, ինչպես նաև հաշվի առնելով այդ ժամանակամիջոցում ձևավորված պատմական պարտքային կորուստները: Այս պատմական դրույքաչափերը ճշգրտվում են, որպեսզի արտացոլեն ընթացիկ և ապագային վերաբերող մակրոտնտեսական գործոններին, որոնք ազդեցություն ունեն հաճախորդի՝ չվճարված մնացորդը մարելու կարողության վրա: Ընկերությունը գնահատել է, որ ամենահամապատասխան գործոն են հանդիսանում շինարարության ծավալը ՀՆԱ-ի մեջ և ազգային դրամական միավորի արժեզրկման մակարդակը, և ճշգրտում է կորուստների պատմական դրույքաչափերն այդ գործոններով պայմանավորված սպասվող փոփոխությունների չափով: Այնուամենայնիվ, հաշվի առնելով պարտքային ռիսկի կարճաժամկետ բնույթը՝ այս մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը հաշվետու ժամանակաշրջանում էական չէ:

Երբ հավանական չէ առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրումը, դրանք դուրս են գրվում (ապաճանաչվում են): Հանձնման-ընդունման կատարողական ակտի ամսաթվից հետո 30 օրվա ընթացքում վճարում չկատարելը և Ընկերության հետ այլընտրանքային վճարման վերաբերյալ համաձայնության չգալը համարվում է գումարի վերադարձման վերաբերյալ խելամիտ սպասումներ չունենալու համար հայտանիշ:

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդները ներկայացված են հետևյալ աղյուսակներում.

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Մարման ժամկետ	Ակնկալվող պարտքային կորուստ	Համախառն հաշվեկշռային արժեք	Ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում
Մինչև 30 օր	2.79%	1,904,432	53,085
31-ից 60 օր	33.85%	328,469	111,185
61-ից 90 օր	35.22%	500	176
91-ից 365 օր	36.27%	36,730	13,321
365-ից ավելի օր	100.00%	2,855	2,855
		2,272,986	180,621

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Մարման ժամկետ	Ակնկալվող պարտքային կորուստ	Համախառն հաշվեկշռային արժեք	Ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում
Մինչև 30 օր	2.73%	522,224	14,254
31-ից 60 օր	33.44%	144,473	48,318
61-ից 90 օր	34.75%	-	-
91-ից 365 օր	27.28%	4,979	1,358
365-ից ավելի օր	100.00%	18,029	18,029
		689,705	81,959

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Ընկերության ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Ընկերությունը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2023թ.	Անտոկոս	Պարտավորություն ֆինանսական վարձակալության գծով	Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)	12.3%			
Մինչև 6 ամիս	702,536	144,204	784,834	1,631,574
6 ամսից մինչև 1 տարի	215,059	140,707	2,399,707	2,755,473
1-5 տարի	-	752,363	-	752,363
	917,595	1,037,274	3,184,541	5,139,410

2022թ.	Անտոկոս	Պարտավորություն ֆինանսական վարձակալության գծով	Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)	11.9%			
Մինչև 6 ամիս	654,643	80,764	336,382	1,071,789
6 ամսից մինչև 1 տարի	115,706	82,651	539,093	737,450
1-5 տարի	-	496,808	-	496,808
	770,349	660,223	875,475	2,306,047

Ընկերությունն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Ընկերության դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերն էականորեն ցածր են անհրաժեշտ դրամական արտահոսքերից: (Լրացուցիչ բացատրել, եթե դրամական միջոցները և դեբիտորական պարտքերը պակաս են անհրաժեշտ դրամական արտահոսքերից):

24 Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և բաժնետերերին բավարար եկամուտ մատակարարի:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալն ու կուտակված շահույթը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք ներառում են փոխառությունները, որոնք բացահայտված են ծանոթագրություն 13- ում:

Ղեկավարությունը գնահատում է Ընկերության կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի ընդհանուր ֆինանսավորման էֆեկտիվ կառուցվածք՝ խուսափելով չափազանց մեծ լծակավորումից (լեվերիջ): Հաշվի են առնվում Ընկերության վարկերի տարբեր դասերի ստորադասության մակարդակները: Ընկերությունը կառավարում է կապիտալի կառուցվածքը և դրանում ճշգրտումներ է կատարում՝ ելնելով տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների հետ կապված ռիսկի բնույթից: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ ճշգրտելու նպատակով Ընկերությունը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժնի գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին, թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվները՝ պարտքը նվազեցնելու համար:

Ընկերությունը վերահսկում է կապիտալը՝ կիրառելով «զուտ պարտքի» և «ճշգրտված սեփական կապիտալի» հարաբերակցությունը.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Զուտ պարտք		
Վարկեր և փոխառություններ	4,061,320	1,453,081
Հանած՝ ստորադաս վարկ	(1,765,927)	(34,520)
Հանած՝ մնացորդներ դրամարկղում և բանկերում	(68,659)	(34,964)
	2,226,734	1,383,597
Ճշգրտված սեփական կապիտալ		
Ընդհանուր սեփական կապիտալ	3,644,216	3,031,038
Գումարած՝ ստորադաս վարկ	1,765,927	34,520
	5,410,143	3,065,558
Զուտ պարտքի և ճշգրտված սեփական կապիտալի հարաբերակցության գործակից	41%	45%

25 Պայմանականություններ

25.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

25.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

25.3 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

26 Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում

Ընկերության պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Հազար դրամ	Վարկեր և ֆակտորինգ	Փոխառություն-ներ	Ընդամենը
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	545,000	7,555	552,555
Դրամային հոսքերից			
Ստացված գումար	2,896,455	142,165	3,038,620
Մարումներ	(2,600,500)	(115,200)	(2,715,700)
Վճարված տոկոսներ	(60,048)	-	(60,048)
Ոչ դրամային հոսքերից			
Հաշվեգրած տոկոսներ	60,048	-	60,048
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	840,955	34,520	875,475
Ստացված գումար	6,336,895	2,170,032	8,506,927
Մարումներ	(5,761,550)	(438,625)	(6,200,175)
Վճարված տոկոսներ	(140,720)	-	(140,720)
Ոչ դրամային հոսքերից			
Հաշվեգրած տոկոսներ	143,034	-	143,034
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,418,614	1,765,927	3,184,541

27 Կապակցված կողմեր

Ընկերության կապակցված կողմերը ներառում են մասնակիցներին, ասոցիացված ընկերությունները, հիմնական ղեկավար անձնակազմը և այլն, ինչպես նկարագրված է ստորև:

27.1 Վերահսկողություն

Ընկերության բաժնետերերն են է ՀՀ քաղաքացի Աշոտ Հրաչիկի Վարդանյանը՝ 80.01 տոկոս բաժնեմասնակցությամբ և ՀՀ քաղաքացի Հրաչիկ Աշոտի Վարդնայանը՝ 19.99 տոկոս բաժնեմասնակցությամբ:

27.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Հազար դրամ Գործարքներ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Մասնակից		
Ապրանքների վաճառք	30,331	-
Ստացված փոխառություններ	2,170,032	142,165
Ստացված ծառայություններ	100	12,100
Փոխառությունների մարում	438,626	115,200
Շահաբաժինների վճարում	2,340,900	-

Հազար դրամ Մնացորդներ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մասնակից		
Վճարվելիք շահաբաժիններ	-	300,000
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	2,474	129
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	84,067	84,000
Ստացված փոխառություններ	1,765,927	34,520

27.3 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ղեկավարությունը և նրանց անմիջական ազգականները կանոնադրական կապիտալում մասնակցություն չունեն:

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Փոխհատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ	49,089	51,298

Հազար դրամ	2023թ. դեկտեմբեր ի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբեր ի 31-ի դրությամբ
Մնացորդ		
Աշխատավարձ	3,322	2,942
Արձակուրդային օրերի գծով պահուստ	8,096	11,973

28 Համադրելի ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

Ընկերությունը փոխել է ՖՀՄՍ-ների կիրառման քաղաքականությունը, ինչի արդյունքում Ընկերության ֆինանսական հաշվետվություններն ուղղվել են հետադարձ՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների:

Կատարվել են որոշ վերահաշվարկներ, որոնց արդյունքում տեղ են գտել ներքոհիշյալ ճշգրտումները:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Նախքան վերաներկայացումը	Վերաներկայացում	Վերաներկայացումից հետո
Հիմնական միջոցներ (ճշգրտում 1)	3,729,535	(840,836)	2,888,699
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (ճշգրտում 1,2)	-	836,114	836,114
Ներդրումներ ասոցիացված կազմակերպությունում (ճշգրտում 2)	611	(611)	-
Պայմանագրային ակտիվներ (ճշգրտում 2)	285,238	121,582	406,820
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (ճշգրտում 2)	1,035,206	(115,504)	919,702
Տրված փոխառություններ (ճշգրտում 2)	55,494	(55,494)	-
Կուտակված շահույթ (ճշգրտում 2)	2,049,815	(186,803)	1,863,012

Հազար դրամ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Նախքան վերա-ներկայացումը	Վերաներկա-յացում	Վերաներկա-յացումից հետո
Ակտիվներին վերաբերող շնորհներ (ճշգրտում 2)	-	47,284	47,284
Հետաձգված հարկային պարտավորություններ (ճշգրտում 2)	35,109	(39,440)	(4,331)
Վարձակալության գծով պարտավորություն (ճշգրտում 2)	530,549	(103,298)	427,251
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր (ճշգրտում 1)	5,558,368	(2,888,342)	2,670,026
Պայմանագրային պարտավորություններ (ճշգրտում 1)	-	3,074,764	3,074,764
Վարձակալության գծով պարտավորության ընթացիկ մաս (ճշգրտում 2)	116,086	34,269	150,355
Ընթացիկ հարկային պարտավորություն (ճշգրտում 2)	2,109	6,518	8,627

Հազար դրամ

2022թ. հունվարի 1-ի դրությամբ	Նախքան վերա-ներկայացումը	Վերաներկա-յացում	Վերաներկա-յացումից հետո
Հիմնական միջոցներ (ճշգրտում 1)	2,580,654	(224,714)	2,355,940
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ (ճշգրտում 1, 2)	-	229,751	229,751
Պայմանագրային ակտիվներ (ճշգրտում 2)	401,143	78,639	479,782
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (ճշգրտում 2)	278,415	(27,157)	251,258
Պաշարներ	938,622	(2)	938,620
Կուտակված շահույթ (ճշգրտում 2)	2,319,831	(109,452)	2,210,379
Վարձակալության գծով պարտավորություն (ճշգրտում 2)	165,804	8,614	174,418
Պայմանագրային պարտավորություններ (ճշգրտում 1)	-	562,442	562,442
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր (ճշգրտում 1)	1,037,245	(406,988)	630,257
Վարձակալության գծով պարտավորության ընթացիկ մաս (ճշգրտում 2)	35,607	1,602	37,209

Ճշգրտում 1

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներն այժմ ներկայացվում են առանձին հոդվածով, նախկինում այդ ակտիվները ներառվել են հիմնական միջոցների հոդվածքում:

Ճշգրտում 2

Հաշվարկվել է դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստը և իրականացվել են արժեզրկման հայտանիշների բացահայտմանն ուղղված թեստավորումներ համաձայն ՖՀՄՍ 9-ի դրույթների, ինչի արդյունքում արժեզրկվել են ասոցիացված կազմակերպություններում ունեցած ներդրման և տրված փոխառության մնացորդները: Միաժամանակ ելնելով պայմանագրերի ավարտվածության աստիճանից հաշվարկվել և ճշգրտվել են պայմանագրային ակտիվի մեծությունը համաձայն ՖՀՄՍ 15-ի դրույթների, ինչի արդյունքում կատարվել է մնացորդի փոփոխություն: ՖՀՄՍ 16-ի դրույթների կիրառման արդյունքում փոխվել են օգտագործման իրավունքի ձևով ակտիվների և վարձակալության գծով պարտավորության մնացորդները, պետության կողմից սուբսիդավորվող տոկոսի մնացորդը ներկա արժեքով ներառվել է ակտիվներին վերաբերող շնորհներ հոդվածում: Արդյունքում վերահաշվարկվել են նաև հետաձգված հարկային պարտավորությունների մնացորդները: Հարկային ստուգման արդյունքների հիման վրա ճշգրտվել է նաև ընթացիկ շահութահարկի գծով ծախսի և պարտավորության մնացորդը:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին մասին հաշվետվություն

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին մասին հաշվետվության մեջ կատարվել եմ փոփոխություններ ՖՀՄՍ-ների կիրառման փոփոխության արդյունքում: Այս մասով կատարված ճշգրտումները ներկայացված են ստորև:

Ճշգրտման արդյունքում 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար.

- Այլ եկամուտի որոշ հոդվածներ այլ ծախսերի հետ հաշվեփակման արդյունքում այլ եկամուտը նվազել է 19,097 հազար դրամով,
- Ավելացել է ակնկալվող պարտքային կորստի գծով ծախս 54,503 հազար դրամի չափով,
- Վարչական ծախսերը նվազել են 336 հազար դրամով
- Այլ ծախսերը նվազել են 18,486 հազար դրամով
- Ավելացել են ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով ծախսեր 55,494 հազար դրամով
- Շահութահարկի գծով ծախսն ավելացել է 32,921 հազար դրամով